Աշխատանքի ծածկագիր 8219

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 1-ի նյութական իրավունքի բաժնի 4"9-րդ, 5"10-րդ , 6.11-րդ , 10"21-րդ, 11"22-րդ, 17"33-րդ, 18"35-րդ, 20"38-րդ, 22"42-րդ, 24"45-րդ, 30"57-րդ, 31"61-րդ , 35"74-րդ, 36"75-րդ հարցերը, ինչպես նաև դատավարական իրավունքի բաժնի 5"9-րդ, 7"12-րդ, 13"22-րդ, 17"33-րդ, 18"34-րդ, 21"46-րդ հարցերը:

Նյութական իրավունք

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են, ինչը հնարավորություն չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի ընտրված տարբերակը և ներկայացված հիմնավորումները չեն համապատասխանում միմյանց, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

11-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ավազակության հանցակազմի յուրահատկությամբ*

պայմանավորված սույն խնդրի պայմանների պարագայում կիրառելի չէ փաստական սխալի կամ հանցափորձի կանոնը, ուստի գնահատականը չի բարձրացվում:

21-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, ավելին՝ չեն բխում իր իսկ կողմից մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

22-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չէ, քանզի կաշառքի շորթման վերաբերյալ փվյալներ առկա չեն, ավելին՝ հիմնավորումները հակասում են միմյանց, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

33-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի վերլուծությունը խարդախության մասին չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ վերլուծությունից: Պաշտոնատար անձին փոխանցվող գումարի մի մասը վերցնելը չի վկայում խարդախության հանցակազմի առկայության մասին: Բացի այդ, մեջբերված վճռաբեկ դատարանի դիրքորոշումները կիրառելի չեն սույն դեպքում: Հետևաբար հավակնորդի կողմից պատասխանի այս տարբերակի ընտրությունը և բողոքում ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 միավոր:*

38-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի հավակնորդի ընտրված պատասխանը գործող ՀՀ քրեական օրենսգրքի պայմաններում սխալ է, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են: Բացի այդ , նույնիսկ եթե հավակնորդը կարծում է , որ առաջադրանքի պատասխաններում բացակայում է ճիշտ պատասխան, նա պետք է ընտրել ճիշտ պատասխանին առավել մոտ տարբերակը , մինչդեռ հավակնորդի կողմից ընտրված տարբերակն ակհնայտ սխալ է, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները տեղին չեն, չի հիմնավորվում ուղեցույցի տարբերակից բխող պատասխանը , ուստի գնահատականը չի բարձրացվում:*

57-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում գործող ՀՀ քրեական օրենսդրության նորմերի ճիշտ մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից չեն բերվել բավարար հիմնավորումներ, ուղեցույցում նշված պատասխանից շեղվող պատասխանը ճիշտ համարելու համար, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

74-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ, խնդրում առկա փվյալները հիմք չեն տալիս գալու նման եզրահանգման, սխալ է մեկնաբանվել չհաջողված հանցկացության ինստիտուտի դրույթները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

75-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի պնդումը ապաքրեականացում տերմինի վիճարկման վերաբերյալ ընդունելի չեն, քանզի արարքի ապաքրեականացման հնարավությունը կապված չէ բացառապես քրեական օրենքգրքի հետ, ուտի գնահատականը չի բարձրացվում:*

Դատավարական իրավունք

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից որպես իր դիրքորոշման հիմնավորում հղում է կատարվել տարբերակի մեկ այլ հարցի, որի համատեքստում ճիշտ է պատասխանել, սակայն հավակնորդը չի ընկալել այն, որ մի դեպքում կասեցման ընդհանուր հիմքերի, մյուս դեպքում՝ դատաքննության ընթացքում կասեցման հիմքերի մասին է: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

12-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի չեն բխում քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումից: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

22-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի չեն բխում քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումից: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

33-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները սխալ են, քանզի վերջինս ճիշտ չի ընկալել հարցադրումը առ այն, որ գ/ տարբերակում նշված է ի սկբանե համաձայնության վարույթ կիրառելը բացառող հանգամանք: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

34-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի չեն բխում քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումից: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի չեն բխում քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի պահանջներից : Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***8219*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 16 միավորը բարձրացնել 1 միավոր՝ արդյունքում արձանագրել 17 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ